№ 126 ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՅՈՒՆԻՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՅՈՒՆԻՍԻ № 126

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի թերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ:

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաեւ խոստացված ՊՐԷՄԻԱՆ:

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ և ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՓՈԽԱԴՐՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Սոլոմոնովսկայա փ., № 21, տ. Հէչուրեանի:

Редакція и Контора газеты „МШАКЪ" ПЕРЕШЛИ ВЪ НОВОЕ ПОМѢЩЕНІЕ—Соломоновская ул., 21.

Յունիսի 14-ին, շաբաթ օր, երեկոյեան ժամը 8-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում (Արամ-Արազեան հրապ. ս. տ. № 7) ՆՇԱՆԱԿՎԱԾ Է

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Զբաղմունքի առարկաներն են.
1) Ընկերութեան նոր անդամների ընտրութիւն.
2) Խորհրդի երեք փոխ-անդամի ընտրութիւն.
3) Մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 7 անդամի և 3 փոխ-անդամի ընտրութիւն:
4) Ընթացիկ հարցեր: ատ. (2.) 583. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ ԵՂԲ. ՏԱՐՆՈՊՈԼ ՖԱԲՐԻԿԱՅԻ

Արժանացած մեծ պարգևի: Վաճառվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում:

Փաբրիկային իսկական գներով:

Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին ոճի, ինչպէս էժանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ: Բացառապէս լրիւ չափն է 11¼ արշ. երկար:

Սէզօնային նմուշները ուղարկվում են ՁՐԻ և օտար քաղաքներում:

Բաժանմունքը Թիֆլիսում.

Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(Գ. Հ.) ատ. 309. 50—18

ՑԻՐԿ Ֆ. ԻՊԱՏՕՎԻ

Ամբողջ ցիրկի տանիքը ծածկված է ամերիկական նոր բրեզենտով: Այսօր, հինգշաբթի, յունիսի 12-ին տեղի կունենայ գաստրոլային մեծ ներկայացում: **Առաջին գաստրոլը կենդանիների վարժեցող տիկ. Մարտանսի.** գեղեցիկ վարժված շներ և կապիկ Մորից 3-րդ: Այսօր մասնակցում է նոյնպէս ամբողջ խումբը գլխաւորութեամբ բալէտի աստղ օր. Ն. Իպատօվայի: **Ազդ.**—Շաբաթ, յունիսի 14-ին տեղի կունենայ այս սէզօնին դեռ չեղած բենէֆիսային ներկայացում: Կը կայանայ օր. Ն. Իպատօվայի բենէֆիսը: Կը լինեն բազմաթիւ նորոյթներ: Բազմաթիւ սիւրպրիզներ հասարակութեան համար: Նոր բալէտ—**«Խալիֆի Երազը»**: Գլխաւոր դերը կը կատարէ օր. Ն. Իպատովա: 582. 1—1

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նազարեան

Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգորսկում և Էսենտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:

Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул. д. Архипова.
ատ. (Ե.Գ.Կ.) 458. 25—15

ՎԵՐԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՐԿ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ
ՌԷՍՏՕՐԱՆ ԵՒ ԲՈՒՖԷՏ
Տէլէֆօն № 14—66.
Ասիական եւ եւրոպական կերակուրներ
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ՃԱՇԻ, ԸՆԹՐԻՔԻ ԵՒ ԱՅԼՆ:

ԱՄԷՆ ՕՐ, ցեր. ժ. 2-ից մինչև երեկ. ժ. 5-ը և երեկ. ժ. 10-ից մինչև գիշերվայ ժամը 2-ը
ՆՈՒԱԳՈՒՄ Է ՀԱՄԵՐԳԱՅԻՆ
Լաւանուագ սալօնային խումբը, լաւագոյն սոլիստների մասնակցութեամբ և ղեկավարութեամբ **Լ. ՍՏՈՒՊԻԷԼԻ**, նոյնպէս և զինւ. երաժշտախումբ:

ԶԲՕՍԱՆՔ ՆԱՒԱԿՆԵՐՈՎ
ատ. (Հ.) 379. 0—7

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամէն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժևսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Ֆիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ.Կ.) ատ. 868. 100—62

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրօֆ. Պօզների)
ԱՐԴԷՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԲԵՌԼԻՆԻՑ և մայիսի 1-ից ընդունում է հիւանդներին ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ: (Կովկասեան հանքային ջրերում):
Հասցէն՝ Пятигорскъ, Елизаветинская ул. д. Архипова, за соборомъ.
(Կ. Հ.) ատ. 104. 50—36

ԴՈԿՏՈՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա գնացող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) ատ. 391. 100—18

ԲԺԻՇԿ
ԼԵՒՈՆ ԱԹԱԲԷԿԵԱՆ
Յունիսի 10-ից մինչև օգոստոսի 20-ը ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՇՈՒՇԻ
Լօրիս-Մելիքեան փողոց, սեփ. տուն:
(Ե. Հ. Կ.) ատ. 578. 10—2

ԲԺԻՇԿ
Տ. ՄԱԿԱՐԵԱՆ
Մասնագէտ վեներական, միզասեռական, կաշուի և սիֆիլիս հիւանդութիւնների, մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Верхній бульв., д. Зипаловой.
(օ. մ.) ատ. 547. 12—5

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Առաջինը Ռուսաստանում կենդանիների համար հիւանդանոցի հիմնարկէքի առիթով Թագուհի Կայսրուհին բարեհաճեց հետևեալ հեռագիրն ուղարկել ի պատասխանի կենդանիներին հովանաւորող համառուսական ընկ. ճիւղի նախագահ Նազիովի հեռագրի.

Շնորհակալում եմ ձեզ և կենդանիներին հովանաւորող ընկ. Պետերբուրգի ճիւղին: Անկեղծ շնորհակալութիւն արտայայտված զգացմունքների համար:

«ՄԱՐԻԱ»

Գործադուլ արին տնտեսական հողի վրա Պուտիլօվի գործարանի բանւորները՝ թւով 3000 հոգի:

Իբրև բողոք փաստաբաններին դատապարտելու դէմ՝ աշխատանքները դադարեցրին ռուսական ռազմամթերք պատրաստող գործարանի, Լիւդվիգ Նոբէլի, Կոպպէլի և մանր գործարանների բանւորները: Ընդամենը չեն աշխատում 5000 հոգի:

Բացվեց կրակից փոխադարձաբար ապահովագրող ընկերութիւնների 5-րդ համագումարը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Կոնտանի հիւրանոցում կայացաւ ճաշ անգլիական գաղութի կողմից՝ եկած նաւաստիների պատւին: Ներկայ եղողների թւում էին Բալտիկ ծովի ծովային ոյժերի պետ ծովակալ Ֆօն-Էսսէնը, անգլօ-ռուսական առևտրական պալատի նախագահ Տիմիրեազեվ և ծովակալ Մակարովի այրին: Անգլիական դեսպանը ճառ արտասանեց, խմելով Թագաւոր Կայսրի և Անգլիայի Թագաւորի կենացը: Բաժակաճառն ընդունվեց ծափահարութեամբ և «կեցցէ» բացականչութիւնով: Երաժշտախումբը նուագեց մի քանի անգամ ռուսական և անգլիական օրհներգները:

Կէսօրվայ ժամը 5-ին Նիկօլայ II Կայսրի ժողովրդական տանը կայացաւ ճաշ ծովային մինիստրութեան կողմից անգլիական նաւաստիների համար: Ճաշի ժամանակ նուագվեցին անգլիական ու ռուսական օրհներգները: Ճաշից յետոյ Պետրովսկի ծառաստանում ներկայացվեց «Ազովի առումը»:

Ժամը 11-ին Պետերբուրգ եկան 100 անգլիացի նաւաստի, որոնց՝ ամբոխն ընդունեց «ուրա» աղաղակներով: Յետոյ եկան դարձեալ անգլիացի մնացած նաւաստիները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պետական Դուման Ռոձեանկոյի նախագահութեամբ դռնփակ նիստում քննում է հերթական կարգով զինւորական և ծովային մինիստրների ներկայացրած օրինագծերը:

ԲԱԳՈՒ.—Նաւթահանքերում գործադուլը շարունակվում է: Բռնի գործողութիւնների համար ձերբակալված են մօտ 300 հոգի: Բալախանում փորձ է եղել հրդեհել մի վիշկա:

ԱՍՏՐԱԽԱՆ.—Կալմըկի անապատում երևացել է ժանտախտ:

ՔԻՇԻՆԵՎ.—Պրուտ գետի վարարումից ջրի տակ է մնացել մօտ 5000 դեսեատին ցանքս:

ՓԱՐԻԶ.—Ծովային բարձր խորհրդի փոխ-ծովակալը ծովային մինիստրի ներկայութեամբ հանդիսաւորապէս յանձնեց ռուսաց ծովային միսսիայի անդամներին հետևեալ շքանշանները: Պատուաւոր լէգէօնի օֆիցերական մեծ խաչ՝ փոխ-ծովակալ Ռուսինին, Պատուաւոր լէգէօնի օֆիցերական խաչ՝ 1-ին կարգի կապիտան Պիլկինին և 2-րդ կարգի կապիտաններ Սմիրնովին, Եգորիեվին և Նիլշէնկովին, Ալեքսէևին:

Կ. ՊՈԼԻՍ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Զմիւռնիայի մօտ հանգցված փարոսները նորից վառված են:

Զինւորական մինիստրը մեկնեց Մուդանիա և այնուհետև Փոքր Ասիայի խորքը՝ զօրքերին դիտելու համար:

ԼՈՆԴՈՆ.—Բաղդադի և Մոսուլի վիլայէթներում նաւթային հանքերի կոնցեսիաները տրված են օսմանեան ընկերութեան: Այդ ընկերութեան դրամագլխի կէսին մասնակցելու, նաև վարչութեան նախագահ նշանակելու իրաւունքը յանձնված է անգլօ-պարսկական նաւթային ընկերութեանը:

ԱԹԷՆՔ.—Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ ծովային մինիստրութիւնը մտադիր է իսկական ծառայութեան կոչել պահեստի զինւորներին:

ԱԹԷՆՔ.—Պաշտօնական թերթում հրատարակված է պալատի որոշումը, որով կառավարութիւնը լիազօրվում է գնել Ալբանիայի Սասենո կղզին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Թուրքիան պաշտօնապէս բողոքեց, որ առաջիկայում Յունաստանին վաճառվելու են «Միսիսիպի» և «Իդագօ» ռազմանաւերը:

ԿԻԼ.—Փոխ-ծովակալ Ուօրէնդէրի հրամանատարութեամբ եկաւ անգլիական նաւատորմը, բաղկացած 4 դրահանաւից և 3 յածանաւից:

ԼՈՆԴՈՆ.—Ս. Մարիամ եկեղեցում՝ Բրիգտոնում գտնվել է մի ռումբ: Մի քանի օր առաջ նախազգուշութիւն եղաւ, թէ սուֆրաժիստուհիները պատրաստվում են յօդս ցնդեցնել եկեղեցին:

Ռեդմոնդը դիմեց կոչով Ամերիկայի միացեալ իռլանդական լիգային՝ օգնելու Իռլանդիայի կամաւորներին:

ՏՕԿԻՕ.—Մինիստր-նախագահը, ներկայացնելով պարլամենտին երեք դրէդնօուտ կառուցանելու լրացուցիչ գումարայատկացման բիւջէն, յայտնեց, որ կառավարութիւնը, յենվելով Անգլիայի հետ կապած դաշնակցութեան, Ռուսաստանի և Ֆրանսիայի հետ ունեցած համաձայնութեան վրա, կաշխատի պահպանել խաղաղութիւնը Հեռաւոր Արևելքում:

ԿՈՆՍՏԱՆՑԱ.—Երեկոյեան վերին լճում ուժեղ փոթորիկից մի քանի նաւեր ջրասոյզ եղան, խեղդվեցին 4 ձկնորս:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 յունիսի

ՎԻԷՆՆԱ. — «Կորեսպոնդենց-Բիւրօյին» հեռագրում են Դուրացցօյից, որ տեղեկութիւն է ստացված, թէ Էլբասանը գրաւված է ապստամբների կողմից: Կառավարական վաշտը գերի է բռնված:

Երեկոյեան քաղաքի կոմենդանտ մայոր Կրօն կոչ հրատարակեց, որի համաձայն քաղաքի բոլոր բնակիչները, որոնք ունեն դանակ, հրացան, բահ և նման բաներ, պէտք է ներկայանան իրան յունիսի 10-ին, առաւօտեան ժամը 7-ին: Պաշտպանվելու համար Կրօնը մտադիր է մաքրել, ոչնչացնել քաղաքի մօտ եղած խիտ թփերը, որտեղ մի շաբաթ անց թաքնվել էր թշնամին և աջողել էր մօտենալ քաղաքին:

Յունիսի 9-ից հեռագրում են, որ անցած օրը և գիշերը անցան առանց որևէ աչքի ընկնող միջադէպերի: Առաւօտեան հեռուում, Դուրացցօյից դէպի հիւսիս նըկատվեց խիտ ծխի սիւն: Վերջը պարզվեց, որ գիւղերն են այրվում, որ հըրդեհել էր առաջ շարժվող Պրենգ-Բիբ-Դօդան: Դուրացցօյում նոյնպէս լսելի եղաւ հրացանաձգութիւն: Առաւօտեան ժամանեցին ներկայացուցիչները, որոնք յայտնեցին ապստամբների խնդիրը, որ Ալբանիայի կառավարիչը հրաման արձակի Պրենկ-Բիբ-Դօդային իր ռմբակոծութիւնը դադարեցնելու, որովհետև նրա կատարած ռմբակոծութիւնը այն տեղերում, ուր բնակվում են ապստամբները, սարսափելի աւերածութիւններ է առաջացրել: Ներկայացուցիչները հեռացան առանց որոշ պատասխանի:

Զինադադարը երկարաձգված է մինչև յունիսի 11-ի առաւօտը:

Ապստամբները երեկոյեան փորձեցին յարձակվել, կրակ բացելով խրամներում, որոնցում գտնվում էին կառավարական զօրքերը, որոնք պատասխանեցին արագութեամբ: Կէս ժամ յետոյ հրացանաձգութիւնը դադարեց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԱՄԵՐԻԿԱ

III

Իմ նախորդ յօդուածներում մատնանշեցի միայն տնտեսական և ազգային կորուստը, որ հայ ժողովուրդը ընդհանրապէս կրել է և կրում է՝ գաղթականութեան իբրև անխուսափելի հետևանք, մեր ներկայ քաղաքական պայմաններում. բայց այդ կորուստից աւելի սարսափելին, աւելի սպառնականը մեր երիտասարդութեան բարոյա-ֆիզիկական կորուստն է:

Երևակայեցէք դուք. ահա մի երիտասարդ—տիպիկ հայ ընտանիքի մի զաւակ—որը դեռ նահապետական շրջանի անաղարտ կեանքն է վարում՝ հլու հպատակ այն տիրապետութեան, ուր հօր կամքը անբռնաբարելի է և ուր մայրը՝ ամէն ինչ:

Այնտեղ՝ հայ ընտանեկան թագաւորութեան սահմաններում՝ ամօթխածութիւնն ու յարգանքն են, որ կառավարում են հզօր կերպով, և դեռ տան անդրանիկի սեպուհ պարտականութիւնն է ոտքի կանգնել հօր ներկայութեանը: Այդ նոյն երիտասարդը հեռանում է տանից, և միանոյն համեմատութիւնով թուլանում է նրա վրա ծնողի և ծանօթ շրջանի չափաւորիչ ազդեցութիւնը: Մօր զգաստացնող աչքերն էլ չեն տեսնում նրան. Նա կեանքի եռ ու զեռի մէջ մեն-միայնակ է. եթէ թոյլ է և անաջող՝ ապա կուլ գնաց նա գոյութեան յուսահատ կռւում, իսկ եթէ աջող է՝ հարիւրին հարիւր նրա բարոյական և ֆիզիկական էութիւնը կուլ գնաց...:

Ինչպէս:

Հարցնում էք. դուք տեսե՞լ էք այն դըժոխքը, որ եւրոպական կամ ամերիկական «փողոցային կեանք» են անւանում. տեսե՞լ էք դուք այն տասնեակներով ու հազար տասնեակներով անմեղ կեանքերը, որ նրան զոհ են գնում: Գոյնը երեսին և շատ թէ քիչ նիւթական աջողութիւն գտած անփորձ ազապը այնտեղ ամէն քայլափոխում են.— Թարկվում է «եդեմական օձի» թունալից հրապոյրին...: Եւ մի օր էլ դուք կը տեսնէք հայրենի արևով ներկված մեր «ազապի» երեսը խամրած, երկաթի մկանունքները թուլացած. Նա կքվել է. Նա ճաղատվել է՝ Բաշ-Շորագեալի կարկտծեծ արտերի նման. կաւային՝ անկենդան դէմքը խորշոմել է. սպիտակ՝ սաթի նման փայլուն ատամները վեր են ածվել թունալից քարայրի խարխուլ բերանին. նա ընկնաւորում է...:

Ֆրանսիայի ազգային գոյութեանն սպառնացող զազիր դրակօնն է խածել մեր հայ ջահելին...:

Իսկ դու որքան ես շահել այդ բոլորի փոխարէն, ով հայ աղբեր. հազա՞ր դոլար. տա՞սն հազար դոլար: Արի ճշմարիտն ասա, քո շահած տասն հազար դոլարի վրա՝ տասն հազար էլ չէի՞ր դնի, եթէ գտնէիր մէկը, որ կարող լինէր քեզ վերադարձնել քո կորցրած կեանքը, քո կորցրած գոյնը, քո կորցրած բարոյականը...: Եթէ այո, և ուրեմն դու կեանքի պայքարի մէջ բանքրուտ ես եղել քո բոլոր աջողութիւններով հանդերձ: Իսկ քո հայրը տանը նստած սպասում է, որ դու նրան «ուրախ» նամակ գրես՝ դեղին չէկն էլ մէջը դրած...: Նա ինչ գիտէ, թէ դու ամէն մի դոլարի համար մի բուռ քրտինք, մի պուտ էլ անարգանք ես քաշել. կամ թէ կեանքդ ու պատիւդ ես փաթաթել այդ նամակի ծալքերում...: Գնա, տքնիր ցերեկները բաղդախնդիր գոյութիւնդ այլոց դռները քարշ տալով, իսկ երեկոները՝ մութ փողոցում մութ ոգիներ թունալից՝ ոչ թէ միայն աշխատութիւնդ ձեռքիցդ առնել են տքնում, այլ՝ մահ շընչում. և դու թառամած ծաղկի պէս՝ մի օր կընկնես...:

Մեր հասարակութիւնը ընդհանրապէս շատ չափազանցված հասկացողութիւն ունի այն ամէնի մասին, որ եւրոպական, որ ամերիկական է: Եւ մինչև իսկ հայ ծնողը կարծում է, թէ իր տղան այդ «սուրբ հողի» վրա ոտ դնելով ինքն էլ կը սրբանայ, կը լուսաւորվի, և մի օր, գուցէ, համալսարան աւարտած վերադառնայ: Առաջին իսկ նամակով ստանում է կոկված, սքված, պէն-

Ջակ հագած իր աղի լուսանկարը և արմանում-զարմանում է, որ իր տղէն «լուսաւորվել», «մարդ» է եղել: Խեղճ մարդ, դու կարծում ես, թէ քո տղէն ամերիկացու հնամաշներով իր մերկութիւնը ծածկելով այդպէս շուտ «լուսաւորվեց» ու «մարդ» եղաւ. դու չես տեսնում, թէ մեր «ռանչպարի» աղջիկներն էլ են այստեղ հովանոցով ու բեղիկուլով պտոյտ անում. դու չես տեսնում, թէ եւրոպական կեանքը ուժասպառ անող նորաձեւութեան միկրօբները ջայլամի փետուրների վրա նստած թռել-հասել են մեր դռների առաջ և ուժգին փռում են մեր այն չոր ու ցամաք անտեսութեան հիմքերը, որով հազիւ ենք կարողանում մեր գոյութիւնը պահել. իսկ դու զարմանում ես, որ քո տղէն եւրոպացու գլխարկ է դրել և «լուսաւորվել», «մարդ» է եղել... Իսկ գլուխը. քանի՜-քանի եւրոպական գլխարկ կրողներ կան այսօր մեզանում, որ եթէ այդ գլխարկը, օրինակի համար, մի ձմերուկի, մի շալկամի և կամ մի դդումի վրա դնելու լինէինք, նոյն չափով կը յարմարվէր... Միթէ դա լուսաւորութիւն է, միթէ ամեն ինչ, որ եւրոպական է, ուրեմն սուրբ և ընդունելի:

Ընդհակառակը՝ եւրոպական կրթութեան և լուսաւորութեան հետ զուգընթաց և դեռ շատ աւելի արագաշարժ մոլութիւններ կան, որ եթէ մեր շիրակեցին որդեգրի ու վերադառնայ հայրենիք, նա անպատճառ աւելի մեծ պատիժ, և մեզ մի անգամ եւս ամաչեցնելու չափ չարիք կը լինի, ինչպէս որ այսօր նա եղել է Լօս-Անջէլոսի «փափկասուններին»: Վաթսուն հազար քո թշուառ եղբայրներին ծոցիդ մէջ պաշտպանեցիր, խնամեցիր, ցամաք հացդ կիսեցիր նրանց հետ, իսկ այսօր հեռու Ամերիկայում հայ «պատուաւէրներին» զգացմամբ ես վրդովւում...

Ես յատկապէս խնդրում եմ իմ ընթերցողից, որ իմ միտքը սխալ չը հասկանայ, որովհետև ես երբէք թելադրված չեմ ժխտել այն ծառայութիւնը, որը Եւրոպան ու Ամերիկան են ընծայել մարդկութեան՝ գիտութեան և արհեստի տեսակէտից: Ով որ գիտութիւնից շատ թէ քիչ օգտվել է, միայն երախտագիտութեան զգացմունք ունի տածելու դէպի այդ «լոյսի կենտրոնները». բայց ցաւն այն է, որ, ֆիզիքական օրէնքով իսկ, ուր որ լոյսը ուժեղ է, այնտեղ մեծութիւնը աւելի շօշափելի է դառնում: Այո, ցաւալին այն է, որ քաղաքակրթութեան և լուսաւորութեան այդ փարոսների ստուերի տակ ադէտների, բարոյական սնանկների, ֆիզիքական աւերակների նեխված վոհմակներ են բուն դրել և արհաւիրք են գործում...: Եւրոպական և ամերիկեան կեանքի պաթոլոգիան է դա այնքան վարակված որքան պժգալի:

Իսկ մեր՝ գիտութեան ու լուսաւորութեան պաշտպանիչ ազդեցութիւնից բացարձակապէս զուրկ, անփորձ պանդուխտը առաջին անգամ նոյն այդ ստուերաքարշ բացասութեան մէջ է ընդունվում իբրև նոր կեանքի առաջին կայարան, և կուլ է տալիս ամեն թոյն այն միամիտ համոզումով, թէ Ամերիկայի մէջ ամեն ինչ «սուրբ» է և ոչինչ չը կայ խոտելի: Ոչինչ. ո՞հ, այն զազիր տեսարանը, որ վարագոյրի ետևն է պարզվում. ո՞հ այն պալարներով լի Եւրոպ-Ամերիկան, որի կեղտոտ գիրկն ենք շպրտում մեր միամիտ ջահելներին, մեր անմեղ աղջիկներին, մեր հալալ ընտանիքներին. ո՞հ այն դատապարտելի հետևողականութիւնը, որ մենք իսկ իբրև համայնք այնքան շտապով ենք որդեգրում երկար կրունկից մինչև բաց պարանոցը, ինչ փոյթ թէ գլխի մէջ դատարկութիւն է տիրում, իսկ տան ելևմուտի մէջ մի ահագին մինուս:

Կարս Բժ. Ալ. Ապահեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կեանքը Լագոդաղում

Լագոդաղ, 6 յունիսի

Աւանիցս դէպի արևմուտք Կաբալ ու նրա շրջակայ գիւղերում անասունների մէջ տարածված է ժանտախտ հիւանդութիւնը և այդ առիթով վաղուց փակված է ճանապարհը, այնպէս որ՝ վերոյիշեալ գիւղերից սայլերով մթերքներ չեն բերվում աւանիս շուկան: Գիւղերը գտնվում են աւանիս և Ճար-ակէ-Կօլօզելի անասնաբոյժներ՝ Զէլիգսատեխի և Ախմետելովի հսկողութեան տակ:

Ձմեռը մեզանում անցաւ կատարեալ գարնանային եղանակներով, իսկ գարունը՝ ընդհակառակը՝ ձմրան պէս ցուրտ, ձիւն, կարկուտ և յորդ անձրևներ: Վերջերս մեծ հեղեղների պատճառով վարարել են Կատեխի, Բէլօքանի, Մածիմի, աւանիս և այլն գետակները, այնպէս որ վտանգաւոր է դարձել Զաքաթալայից մինչև աւանիս ճանապարհն անցնելը. քանի-քանի ֆուրգօններ ու կառքեր են շուռ եկել ու վնասներ հասել անցուդարձ անողներին: Ցրտի պատճառով՝ սակաւ է այս տարի միրգը: Բոժոժաքաղը վերջանալու վրա է. բերքը անցեալ տարվանից սակաւ, բայց լաւ տեսակի է. աւանիս վաճառականները պուդը գնեցին 15—17 ր., իսկ Բէլօքանում մինչև անգամ 18 ր.: Ներկայումս գինը իջել է:

Անտառը տերևազարդված լինելով լոյս են ընկել աւազակային խմբեր: Մի քանի օր առաջ կաշկրեցի աւազակ Գիորգի Խարաշվիլին վրէժ լուծելու նպատակով Շրօմա գիւղի սահմանում հրացանազարկ արեց նոյն գիւղացի Մօսէ Ճեղիլաշվիլիին ու ներից փախուստ տուեց, սպառնալով որ գիւղում ունի մի քանիսի հետ ևս հաշիւ: Ոստիկանութիւնը խիստ հետևում է:

Բ. Ք. Սուքիասեան

Մեր ներկայ դրութիւնը

Կարս, 6 յունիսի

Դեռ կանոնաւոր տաքութիւն չենք տեսել, դեռ ամառվայ շոգերը չեն երևում. դեռ ամառվայ հագուստով երիտասարդներ չը կան: Թէև գեղեցիկ սեռից ոմանք շտապել են բաց անել կուրծքները և բազուկների կէսը, բայց դա շոգից չէ, այլ մոդա է...

Անձրևները զահլա տարան. շարունակ գալիս են: Բուսականութիւնը փարթամ դրութեան մէջ է: Հացաբոյսերը մեծ յոյսեր են տալիս: Եթէ յունիսի վերջերին և օգոստոսի մէջ էլ մի քանի անգամ անձրև տեսնենք, այնուհետև առատ հաց կուտենանք:

Առուտուրը քեսատ է. ամեն բանի ծայրայեղ թանգութիւն է: Առատ առուտուրի մէջ են պրօժեկտօրները, ռեստօրանները և քաղաքից դուրս խորհրդաւոր բուդկաները:

Սարբեկ Տէր-Մելքիսեդեկեան

Հայ Կանանց Բարեգ. Ընկ. պրօգիմնազիան

Ասխաբադ, 6 յունիսի

Ասխաբադի Հայ Կանանց Բարեգ. Ընկ. ուսումնարանի IV դասարանն, առաջին անգամ, այս տարի աւարտեցին 11 հոգի և ստացան IV-դասեան վկայական Ընկերութեան կնիքով:

Աւարտող աշակերտուհիներից երեքը քննութիւն տուեցին տեղական իգական գիմնազիայում և ստացան գիմնազիական IV դասարանի վկայական:

Ընկ. վարչութիւնը անցեալ տարվանից աշխատում էր պրօգիմնազիական իրաւունք ձեռք բերել՝ իր խնամքին յանձնված դպրոցի համար. վերջապէս վարչութեան ջանքերը զուր չանցան: Մայիսի 30-ին պաշտօնապէս յայտարարված էր տեղական լրագիրներում, որ յիշեալ Ընկ. ուսումնարանը ստացել է պրօգիմնազիական իրաւունքներ: Ուրեմն առաջիկայ տարվայ շրջանաւարտները կը ստանան պրօգիմնազիական իրաւունք հէնց Ընկ. դպրոցից: Հայուհի

Նպաստաւոր եղանակներ

Նալբանդ (Ալէքս. գաւ.), 8 յունիսի

Այս տարվայ նշաններից երևում է, որ մեր գիւղական երկրագործ ժողովրդի համար աջող տարի պիտի լինի: Ապրիլ ամսի վերջերից սկսած մինչև հիմա՝ համարեա ամեն օր առատ անձրև է գալիս. դրա հետ միասին մէջ ընդ մէջ լինում են պայծառ արևային օրեր, որպիսի հանգամանքը խիստ նպաստում է բուսականութեան աջող աճման: Դաշտ ու սար, հանդ ու անդաստան ծածկված է բաւականաչափ բարձրացող կանաչով: Եթէ բնութեան որևէ գիպուածը չը պատահի, մեծ յոյս կայ, որ տարվայ բերքը առատ լինի, և մեր շինականը՝ գոնէ մի առժամանակ՝ ազատվի թէ իր գերդաստանին և թէ անասուններին պաշար գնելու նեղութիւնից: Անցեալ շաբթին, Ղալթախչի գիւղի սահմանի մի մասի վրա կարկուտ եկաւ, որը մի փոքր վնաս պատճառեց հացաբոյսերին:

Յովհ. Համբարեան

Եղանակները Լօռում

Գիւլագարակ, 17 յունիսի

Պարբերական յորդառատ, կարկտախառն անձրևները վերջ չունեն Լօռում այս տարի: Մի շաբաթ է անձրևները անընդհատ են տեղում. իսկ ապրիլ և մայիս ամիսները աւելի անձրևային էին: Այս շաբաթը կայծակի շաբաթ էր. կայծակը լեռներ էր դղրդեցնում և զոհեր տանում:

Անցեալ օրը, Լօռու հարաւ-արևմտեան կողմը բարձրացող Թօզար սարի վրա դագայի (սարւոր գիւղացիների գետնափոր տնակ) մէջ կայծակը շանթում է մի 20 տարեկան երիտասարդի ու տեղնուտեղը քրքրում: Ցաջորդ օրը գիւղիս աղիւսի գործարանների մօտ կայծակը շանթում և խանձում է մի ընտիր գոմէշի վզից և տիրոջ ձեռք ծոցը թողնում: Ականատես եղայ, թէ ինչպէս միւս օրը գոմէշի տէրը՝ Գալինեան Պետրոսը ընկել էր գիւղամէջն ու մունաթով, աղաչանքով, մեծ տոկոսներով պարտք էր ուզում վերցնել, որ մի նոր գոմէշ գնի՝ լուծը լրացնելու համար, ու ոչ ոք չէր ուզում պարտք տալ... Մի երկու օր յետոյ գիւղից 5 վերստի վրա գտնվող Նիկոլայեվկա մոլոկան գիւղում կայծակը խփում է մի տան, քայքայում, դուռը ճեղքում և սպանում 3 հոգի:

Ահա երկրային պատուհասները քիչ են, երկնայինն էլ գալիս է պակասը լրացնելու: Եթէ անձրևային եղանակը այսպէս շարունակվի, ինչպէս գրել էի անցեալ անգամ, Լօռուն սպասում է անբերրիութիւն, նախկին տարիների նման:

Ռ. Իսկէնտէրեան

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԽԱՆՔԵՆԴՈՒՄ

Անցեալներում գրել եմ, որ Խանքենդի հողատէր շուշեցի Շահնազարեանների և Խանքենդի ռուս բնակիչների միջև վէճ կայ՝ հողային խնդրի առիթով: Երկար տարիներ գործը դատարանական ինստանցիաներում քննվելուց յետոյ, վերջապէս, ինչպէս հաւաստի աղբիւրից տեղեկացնում են, վերջնական վճիռը բարձրագոյն սենատը յայտարարել է վճիռ կողմերին:

Այսպէս՝ Շահնազարեաններին պատկանող 670 դեսեատին հողից 528 դես. տրվում է զինուորական վարչութեանը 190,303 ռուբլով. վերջինս այդ հողից յատկացնում է Խանքենդի ռուսներին 251 դես., այն պայմանով որ միայն իրանք օգտվեն՝ առանց իրաւունք ունենալու հողը ծախելու: Իսկ մնացած 142 դես. հողը մնում է Շահնազարեանների իրաւունքին: Այս հողամասի մէջ է մտնում և Խանքենդի կենտրոնը, որտեղ բացի ռուսներից՝ տներ ունեն նաև հայերը և թուրքերը: Հայերից մի քանիսը արդէն Շահնազարեաններից հողը առել սեփականացրել են. իսկ մեծամասնութիւնը թուրքերի հետ դեռ մնում են անորոշ դրութեան մէջ:

Պէտք է ասել, որ ռուսները յիշեալ 251 դես. հողը (այս հողաբաժնի մէջ է հաշված և ռուսների տնատեղերը) ձեռք բերին շնորհիւ այն հանգամանքի, որ իրանց զինուորական ծառայութիւնը 1840-ական թւականներին աւարտելուց՝ կառավարութիւնը խոստացել էր Խանքենդի տեղը արօտատեղիներով հանդերձ տալ իրանց՝ ռուսներին, որպէսզի էլ յետ չը վերադառնան իրանց հայրենիքը. դրանով կառավարութեան ցանկութիւնն է եղել հայերի և թուրքերի մօտ բնակեցնել ռուսներին, մի քաղաքականութիւն, որ դեռ մինչև այժմ շարունակվում է՝ Անդրկովկասում գաղթական ռուսներ բնակեցնելով: Եւ ռուսները, կառավարութեան այդ խոստման համաձայն, Խանքենդում բնակութիւն հաստատելով, այժմ էլ իրանց իրաւատէր են համարում օգտվելու Խանքենդի հողից, չը նայած այն բանին, որ այդ միևնոյն հողը սրանից 17 տարի առաջ ամուրդով գնել է այժմեան Շահնազարեանների հօրեղբայր հանգուցեալ Ցակոբ-աղա Շահնազարեանը Թուրք Ուգիմխէվից՝ պարտքի տեղ:

Եւ այժմ, երբ ռուսներին է յատկացվել 251 դեսեատին չափ ընդարձակ հողաբաժին, հայերը և թուրքերը մնում են ենթարկված Շահնազարեանների հայեցողութեանը, թէ ինչպիսի պայմաններով կը համաձայնվեն հողերը տալ խեղճ սևաստէրներին:

«Խեղճ» ենք ասում և ընդգծում նրա համար, որ մինչդեռ ռուսները դատարանների շեմքերն էին մաշում հողը իրանց օգտին վճռել տալու համար, հայերը և թուրքերը լուռ ականատեսի դերում մնացին՝ առանց իրանց գլուխների հոգսը քաշելու. և ընդհակառակը՝ ժամանակին օգտվելու առիթը բաց թողնելով, զանազան միջոցներով Շահնազարեանների աջողութեանն էին նպաստում, ինչպէս օրինակ հայերից մի քանիսը Խանքենդի պէս տեղի հողի սաժէնը 2—3 ռուբլով գնեցին՝ գին, «մաղանդա» գնելու համար:

Այդպիսիների ցանկութիւնն էր՝ միայն հաճոյանալ հողատէր աղային:

Եւ իրօք, զարմանալու բան չէ Խանքենդի տեղի հողի սաժէնը 2 ր. գնահատելը:

Այժմ գոնէ, երբ հողատէր աղան ըստ «մաղանդայի» է առաջարկում տնատեղերը առնելու, արդեօք ժամանակը չէ դիմել ուր հարկն է, որպէսզի առանձին կօմիսիա նշանակվի հողի գինը բարեխղճօրէն որոշելու համար:

Այո, ժամանակն է հաւաքական խնդրագրով դիմել ուր հարկն է և՝ նկարագրելով ժողովրդի արդի անտեսական սուղ դրութիւնը՝ խնդրել հողատէր աղայի քմահաճոյքից ազատելու համար յատուկ կօմիսիա նշանակել՝ հողի գինը որոշելու:

«Լաւ է ուշ, քան երբէք»:

Խանքենդ Ա. Ասլանեան

ԳԱՆՁԱԿԻ ԿՐՈՒԺՕԿԸ

1905 թւից յետոյ Գանձակի հայերը միտք յղացան իրանց համար առանձին հասարակական ակումբ բանալ, որը և շուտով բացին «Елисаветпольскій Кружокъ» անունով: Կրուժօկի բացումը անհրաժեշտ էր, որովհետև հայերը խիստպէս զրկված էին միակ հասարակական ակումբը յաճախելու հնարաւորութիւնից և չունէին մի տեղ, ուր կարողանային հաւաքվել՝ ժամանակ անցկացնելու:

Շուտով կրուժօկի տասնամեակը կը լրանայ, սակայն պէտք է ասել, որ նրա գործերը այնքան էլ լաւ չեն գնում. մինչև անգամ մի ժամանակ նա՝ նիւթական պակասութեան պատճառով՝ փակվելու երկիւղի մէջ էր: Սրա գլխաւոր պատճառը կայանում է նրանում, որ կրուժօկի անդամները իրանց շատ են «տնավարի» կամ «ասիական կերպով» պահում. ընդհանուր խօսակցութեան ժամանակ խօսքերի մէջ խտրութիւն չեն դնում, սրա-նրա պատիւն են շօշափում՝ առանց քաշվելու և ամաչելու. շատ անգամ այնպիսի աղմուկներ են բարձրացնում, որ կարծես թէ նրանք ոչ թէ հասարակական հաստատութեան մէջ լինեն, այլ մի «Շէյթան-բազարում». և այս ամենի պարզ հետևանքը այն է լինում, որ այժմ շատերը խուսափում են կրուժօկ յաճախելուց:

Միակ բաւականութիւնը, որ տալիս է կրուժօկը իր անդամներին, այդ լօտօն ու թղթախաղն է, որով զբաղված են, առանց խտրութեան, թէ հարուստը, թէ աղքատը, վաճառականը, արհեստաւորը և չինօվնիկը: Կրուժօկն ունի նաև գր.-ընթերցարան, բայց շատ քչերն են նրանից օգտվում ու հետաքրքրվում. ստացվում են շաբաթաթերթեր ու ամսաթերթեր, որոնց թերթերը մինչև հիմա էլ մնում են առանց կտրվելու:

Բացի լօտօյից, թղթախաղից ու տէկ-տէկ տրվող պարահանդէսներից, միակ էստետիքական զուարճութիւնը, որ տալիս է կրուժօկը իր անդամներին, այդ յաճախ տրվող ընտանեկան երեկոյթներն են սազանդարով և սրա հետ կապված պարսկական երգով:

Գանձակեցիներն և կրուժօկի ղեկավարները այնքան սիրահարներ և երկրպագուներ են պարսկական երաժշտութեան և երգեցողութեան, որ քիչ է մնում երեկոյթների մասին բաժանվող ծանուցագրերի մէջ «սազանդար» բառը արշինաչափ տառերով գրել տան: Դժուար թէ ամբողջ Կովկասում մի ուրիշ քաղաք գտնվի, բացի Գանձակից, որի բնակիչներն այսքան կուրօրէն ենթարկված լինեն հին դարերի մնացորդ պարսկական երաժշտութեան և «այ ամա՛ն, այ ամա՛ն» երգերի ազդեցութեանը:

Վատ չի լինի, եթէ մեր կրուժօկի ղեկավարները մի փոքր էլ անցնէին աւելի կուլտուրական և նպատակայարմար բաների և աշխատէին կրուժօկի անդամների համար տալ օգտակար զուարճութիւններ, այն է՝ գրական երեկոյթներ, զրոյցներ, դասախօսութիւններ, հայկական խմբական երգեր, թեթև ներկայացումներ և այլն:

Ցաւալին այն է, որ մեր քաղաքը առհասարակ քիչ են յաճախում հայ դրամատիք խմբեր, և եթէ յաճախում էլ են, շատ քիչ աջողութիւն են ունենում, շնորհիւ մեր անտարբերութեան և ազգային գիտակցութեան բացակայութեան: Եւ երբ հայոց մի ներկայացում է տրվելիս լինում կրուժօկում, կարծես թէ դիտմամբ, ընտանեկան երեկոյթ են սարքում իրանց անհամ սազանդարով.

Յովսէփ Խօջայեանց

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Զաքաթալա, 6 յունիսի

Այսօր մեր քաղաքում, շրջանիս հաշտարար դատարանում, քննվեց՝ մեր քաղաքում նմանը չը տեսնված մի գործ, որ գրաւել էր ահագին բազմութիւն երկու սեռի, այնպէս որ դատարանի ներսն ու դուրսը լեփ լեցուն էր:

Բանը նրանումն է, որ 3 օր սրանից առաջ, ժամը 4-ին կէսօրից յետոյ, երբ քաղաքիս գլխաւոր հրապարակում լինում է ահագին բազմութիւն զբօսնողների, մի հասած հայ օրիորդ անցնելիս է լինում. Նստարաններից մէկի վրա բազմած մի պահեստի զինուորական աստիճանաւոր, Ցարութիւնեան ազգանունով (տեղացի), թէ ինչ շարժառիթից դրդված՝ յայտնի չէ, հրամայում է կանգնել օրիորդին, որը՝ ուշադրութիւն չը դարձնելով պարոնի պահանջին՝ շարունակում է իր ճամբան: Պարոնը մի երկու անգամ կրկնելով իր յամառ պահանջը, լսում է օրիորդի խօսքերը՝ «Ի՞նչ էք կամենում ինձանից», և յանկարծ՝ վեր ցատկելով տեղից՝ ամենքի աչքերի առջև ապտակներ է տեղում օրիորդի դէմքին...

Օրիորդը անմիջապէս գանգատվում է հաշտարար դատաւորին, ցոյց տալով բազմաթիւ վկաներից մի քանիսին:

Ահա այդ գործն էր, որ այսօր քննվեց: Պարոնը դատապարտվեց 2 ամսվայ բանտարկութեան: Նա ամուսնացած և երեխայի տէր է:

Սօյզադէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասի փոխարքայ կոմս Իլ. Իվ. Վորոնցօվ-Դաշկօվը Ալուպկայից Թիֆլիս կը վերադառնայ յունիսի 14-ին, երեկոյեան ժամը 8-ին:

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է Թուրքական Մէյդանը վերանուանել Սայաթ-Նովայի հրապարակ:

◆ Ցունիսի 1-ից արդէն ընդհատվել են ժողովրդական համալսարանների Ընկերութեան կազմած դասախօսութիւնները Ժողովրդական Տանը: Դասախօսութիւններից վաղ ընդհատվել են նաև գրագիտութեան դպրոցների պարապմունքները և երեկոյեան դասընթացքները: Առաջիկայ աշնանից դասախօսութիւնները կազմվելու են աւելի ճոխ ծրագրով և բովանդակութեամբ: Դասախօսներ հրաւիրվելու են մասնագէտ և աւելի պատրաստված մարդիկ:

◆ Քաղ. դումայի իրաւասու Ա. Ս. Բաբեան քաղ. վարչութեան ներկայացրել է մի գրութիւն, որի մէջ նա արտայայտվում է մսի սակագինը վերացնելու դէմ և խնդրում է իր այդ կարծիքը կցել դումայի նիստի արձանագրութեան:

◆ Հանքային դեպարտամենտը դիմել է Կովկասի հանքային վարչութեան, խնդրելով առաջարկել իրան ենթակայ վարչութիւններին և շրջանային ինժէնէրներին ամեն ամսի 7-ից ոչ ուշ դեպարտամենտին յայտնել տեղի ունեցող գործադուլների մասին:

◆ Ինչպէս տեղեկացնում են, Աւետիք Ահարոնեան ծանր հիւանդ է Լօզան քաղաքում: Դեռ Կովկասում, բանտում եղած ժամանակ, նա հիւանդացել էր թոքախտով և երկար ժամանակ բժշկվում էր Բաքւի նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցում: Այժմ հիւանդութիւնը նորից երևան է եկել:

◆ Կովկասեան թանգարանը կառուցող յանձնաժողովի նախագահ Մ. Պ. Հակկէլ դիմել է քաղ. վարչութեանը խնդրելով այդ շինութեան համար ձրի ջուր թողնել:

◆ Մի խումբ մարդիկ դիմել են նահանգապետին միջնորդելով, որ թոյլ տրվի իրանց հիմնել մի ակումբ՝ «Թիֆլիսի առևտրական ծառայողների ակումբ» անունով: Այդ ակումբի անդամները կարող են լինել միայն առևտրական հիմնարկութիւնների ծառայողները՝ առանց կրօնի, ազգի և սեռի խտրութեան: Անդամավճարը 5 ռուբլի է:

◆ Թիֆլիսի արական IV գիմնազիան աւարտել են 20 հոգի: Դրանցից երեքը ոսկէ մէդալով:

◆ Րէալական դպրոցի VII լրացուցիչ դասարանները աւարտել են 42 հոգի:

◆ Կայսերական Ռուսական Աշխարհագրական Ընկ. Կովկասի ճիւղը խնդրում է այն բոլոր անձանց, որոնք նախաձեռնում են որևէ կերպ հետազօտել Կովկասը, չը մերժել իրանց հետազօտութիւնների մասին տեղեկութիւններ հաղորդել ճիւղին, գոնէ մի քանի գծերով. տեղեկութիւններ հաղորդել նոյնպէս իրանց՝ ապագայում կատարելիք աշխատանքների մասին: Այդ տեղեկութիւնները հնարաւորութիւն կը տան ճիւղին իր «Տեղեկատուներում» մանրամասն լուրեր տալ Կովկասում կատարված հետազօտութիւնների մասին: Հասցէն հաղորդումների համար՝ Кавказскій отдѣлъ Императорскаго Русскаго Географическаго Общества, Тифлисъ.

◆ Մեժեվայա փող. № 10 տանը ապրող Անտօն Ջելինսկի յայտնեց ոստիկանութեան, որ իր տնից իր բացակայութեան ժամանակ անյայտ չարագործների ձեռքով գողացվել են 150 ռուբլու արժողութեամբ զանազան իրեր:

ԿՈՎԿԱՍ

◆ Բաթումում փակվեց վրաց «Ազրի» ամենօրեայ լրագիրը:

◆ Կօջօր ամարանոցում ժամանակաւորապէս բացված է պօստ-հեռագրատան բաժանմունք:

◆ Ինչպէս գրում են, Կովկասի փոխարքայի նախկին օգնական սենատոր Վատացին հրաւիրվել է Լիանօզօվի ձկնարանների կառավարիչ 65,000 ռուբլի ռոճիկով:

◆ Օդաչու Ե. Նազարեան Բագւում աջող թռիչք է կատարել իր ապարատով և կէս ժամի չափ մնացել օդում:

◆ Արմաւիրում ածելիով ինքնասպանութիւն գործեց 22 տարեկան ուսանող Այգինեանը:

◆ Պրոֆ. Ջաքօլօտնին «День» լրագրում գրում է Բագու կատարած ճանապարհորդութեան մասին և ասում է, որ անհրաժեշտ է բարելաւել բանւորների կացարանները, որովհետև աշնանը կարող է կրկին ժանտախտ երևալ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Գլխաւոր բժշկա-սանիտարական վարչութիւնը, «Рѣчь»-ի ասելով, հրատարակել է հակիրճ հաշիւ ռուսաց զօրքի դրութեան մասին յընթացս 1913 թւի: Ինչպէս երևում է այդ հաշւից, 1913 թ. իսկական ծառայութեան մէջ գտնվող օֆիցէրներից տկարացել են 27,402 մարդ, նախանցեալ տարվանից 1007 մարդով պակաս: Տկարացածներից մեռել են 372 հոգի: Բացի դրանից դժբաղդ դէպքերից մեռել են 46 հոգի և ինքնասպանութիւն գործել 119: Ընդամենը 1913 թ. մեռել են 537 օֆիցէր. անցեալ տարվանից 100 մարդով աւելի: Զինւորներից 1913 թ. հիւանդացել են 521,065 հոգի, մեռել են 5368, որի թւում՝ հիւանդանալուց 4331, դժբաղդ դէպքերից 522 և ինքնասպանութիւնից 515 հոգի: Զինւորական ծառայութեան պիտանի չը լինելու պատճառով արձակվել են արձակուրդով 28,559 հոգի և բոլորովին ազատվել են ծառայութիւնից 16,671: Բացի վերոյիշեալ 521,065 հիւանդ զինւորից, որոնք 1913 թ. գտնվում էին հիւանդանոցներում, անցեալ տարի երթևեկ հիւանդներ եղել են 4.553,394 զինւոր:

◆ Ինչպէս յայտնի է, Պետերբուրգում, սենատոր Նիկոլսկիի նախագահութեամբ, ներկայումս խորհրդակցութիւն է գումարել այն միջվարչական մասնաժողովը, որ պաշտօն ունի մշակել կովկասեան պոլիտեխնիկումի օրինագիծը: Ի միջի այլոց մասնաժողովին ներկայացված է Կովկասի փոխարքայի առաջարկութիւնը՝ բանալ պոլիտեխնիկումին կից առանձին հիդրօտեխնիկական (ջրատեխնիկական) բաժանմունք:

◆ Օդեսսայից մի քանի շոգենաւերով ձիեր են ուղարկվում Թիւրքիա: Այդ բանը կապ ունի Թիւրքաց կառավարութեան ռազմի պատրաստութիւնների հետ, որ ներկայումս Բ. Դուռը մեծ եռանդով առաջ է տանում:

◆ Սազօնովը Պետերբուրգում խօսակցութիւն ունեցաւ դեսպանների հետ բալկանեան գործերի առիթով:

◆ Պետերբուրգում թունաւորվեց 14-ամեայ Շալամօվան նրա համար, որ ծնողները մերժեցին ամուսնացնել նրան:

◆ Բուրցեվը հերքում է սոց.-դեմ. պատգամաւոր Մալինովսկիին վերագրված պրովօկատոր գործունէութիւնը:

◆ Ռօստովում Դ/վ. սկսեց իր գործունէութիւնը ժուռնալիստների ընկերութիւնը, որի կանոնադրութիւնն արդէն հաստատված է: Ընկ. կազմի մէջ մտնում են Հիւսիսային Կովկասի, Եկատերինօսլաւի, Ստաւրոպոլի և Վորոնէժի նահանգի ժուռնալիստները:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց այժմս դադարած «Փիքրի» լրագրի խմբագիր Նինա Սամխարաշվիլին իր լրագրում «Բանւորութեան կեանքից» վերնագիրը կրող բաժնում տպած մի շարք յօդւածների համար ենթարկված է 129-դ յօդ. հիման վրա պատասխանատւութեան և արդէն ստացել է մեղադրական ակտը։

◆ Ոմն Տրիփոն Գլիբաձէ փքուն յոյսեր տալով Ռոստովից Իւզովկա է տարել մի խումբ իմերէլ բանւորների, որպէս թէ նրանց այնտեղ գործ տալու, որ օրական աշխատեն երեք ռուբլուց ոչ պակաս, մինչդեռ ճապէս ոչինչ չէ տուել։ Այդ ափէրխատութեան զոհ դարձած բանւորները այժմ լրագրութեան միջոցով զգուշացնում են ուրիշ բանւորների՝ չը խաբվել և չը հաւատալ նման դատարկ խոստումներին։

◆ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ կոոպերացիական միութիւններ հիմնելու գործը լայն ընդունելութիւն է գտել գաւառներում, վրաց «Կոոպերացիա» շաբաթաթերթի խմբագիր Ի. Գաբիլայան առաջիկայ յուլիսի 1-ից Քութայիսում բանում է կոոպերացիական կուրսեր, որ տևելու է մինչև նոյն ամսի 15-ը։ Նախաձեռնող Գաբիլայան ռուսերէնից հրաւիրելու է լաւագոյն մասնագէտ դասախօսների, այդ կուրսերի ունկնդիրներին կոոպերացիայի մասին անհրաժեշտ տեղեկութիւններ աւանդելու։

◆ Վրաց Գիւղ. Ընկերութիւնը Գորու շրջանում կազմակերպել է մրգաբոյծների կօօպերատիվ միութիւն, որի նպատակն է ազատել գիւղացիներին պատահական վաշխառու չարչիների ճանկերից և կենտրոնական բիւրօյի միջոցով տեղային մրգերը ի մի հաւաքելով արտահանել Ռուսաստանի շուկաները։

◆ Չափից դուրս ցաւալի լուրեր են բերում վրաց մամուլի մէջ տպվող գաւառական թղթակցութիւնները։ Երկրագործութեան անհաշտ թշնամի կարկուտը ամենուրեք սկսել է ջարդ ու փշուր անել գիւղացիների ցանքսերը և այգիները։ Թիօնէթի շրջանի մի շարք գիւղեր—Սիօնի, Դիղմէլաուրի, Խէօրա, Սաղարաուլօ, Կուպրի-Անթ-Կարի և այլն—մայիսի 27-ից 31-ը տեղացող կարկուտ-հեղեղից ամենածանր չափով վնասվել են և մնացել դրսից սպասվող օգնութեան յոյսով։

Թիօնէթում հեղեղից խեղդվել է մի հովիւ և մի կին, որ գնացած է լինում գըրբացի մօտ բաղդը որոշելու, բայց վերադարձին զոհ է գնացել հեղեղի ալիքներին։

◆ Ոստիկանութիւնը գրաւեց վրաց «Ախալի Փիքրի» շաբաթաթերթի համարները։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ ԲՈՒԺԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

II

Տեսնենք այժմ, թէ այդ սրսկումներն ինչ ներգործութիւն են ունենում մարմնակազմի հիւանդ մասերի վրա և ինչ փոփոխութիւններ են առաջ բերում այդ մասերում և ընդհանուր մարմնակազմի մէջ։

Առաջին սրսկման ազդեցութեան տակ հիւանդի մարմնի մէջ առաջ է գալիս մի ընդհանուր թուլութիւն։ Այս փազի ընթացքում հիւանդի հազը սաստկանում է և սկսում է աւելի մեծ չափով մաղաս (խուխ) քակվել. հիւանդն իրան խիստ թոյլ է զգում։ Սակայն շուտով սկսվում է բարելաւման շրջանը, երբ հիւանդն սկսում է իրան հետզհետէ աւելի լաւ զգալ, նրա ոյժերը քիչ-քիչ վերականգնում են, հազը պակասում է՝ թուլանում, մաղասաթափութիւնը հետզհետէ նւազում է, կակղում և բուժման վերջին շրջաններում բոլորովին լորձային կերպարանք է ստանում։ Աւելի յամառ դէպքերում մաղասաթափութիւնը (խուխը) աւելի երկար է տևում և հիւանդի բուժվելուց յետոյ է միայն իսպառ չքանում։ Խուխի և թոքի միջից տուբերկուլօզի բացիլները բաւական արագութեամբ անհետանում են, հատ-հատ պատահածներն էլ կորցրած են լինում իրանց կենսունակութիւնն ու վարակիչ ոյժը, որովհետև ինչքան բուժման պրօցեսը առաջանում ու աւելի ուժգնանում է, այնքան խուխի և թոքի միջից գտնված բացիլների ներարկումը հնդկախոզերին՝ (cobaye) վարակման աւելի թոյլ արտայայտութիւններ է ցոյց տալիս. այնքան այս կենդանիներն աւելի թեթև ու աննշան կերպով են հիւանդանում։

Սրսկումներից անմիջապէս յետոյ առհասարակ հիւանդի տաքութիւնը բարձրանում է, սակայն շուտով սկսում է հետզհետէ իջնել և բուժման վերջին շրջաններում վերջնականապէս կանգ է առնում նօրմալի վրա։ Հէնց որ սրսկումները մի քանի օրով դադարեցնում են, հիւանդի քաշն ամեն օր զգալի քանակով աւելանում է։

Հիւանդի ներքին գործարանների հիւանդ մասերը և առանձնապէս թոքերի մէջ տուբերկուլօզի բացիլների ազդեցութեան տակ առաջացած թուբերակները (tnbercules), որոնք հետզհետէ ուռելով թոքերի հիւսուածքները և իրար միանալով աւելի մեծանում, բնապանրակերպ վէրքեր են կազմում, կակղում են ու թարախանում, առաջացնելով մի կամ մի քանի թարախալից մեծ ու փոքր խոռոչներ, որոնց պարունակութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թոքախտաւորին յատուկ խուխը, սրսկումների ներգործութեան տակ հետզհետէ փոքրանում են և, թուբերակ թէ խոռոչ, բոլորն էլ հիմնաւորապէս չորանում են, թողնելով իրանց տեղը փոքրիկ սպիներ։ Սրսկումները միևնոյն ազդեցութիւնն ունեն նաև կաշւի և վզի ու մարմնի այլ մասերի խուլերի տուբերկուլօզի վրա։

Նախքան իր գտած միջոցը մարդկանց վրա փորձելը, Հէնրի Սպալինգերը բազմաթիւ փորձեր է կատարել հնդկախոզերի վրա։ Նախօրօք մարդկային տիպի տուբերկուլօզի բացիլներով վարակված 5 հնդկախոզ 1911 թւի դեկտեմբերի վերջերից սկսած սրսկումների են ենթարկվել և 1912 թւի մարտ ամսվայ վերջերին, ասել է երեք ամսվայ ընթացքում, հիմնաւորապէս բուժվել են։ Բուժման պրօցեսն սկսելիս վերոյիշեալ կենդանիները խիստ առաջացած ու ծանր տուբերկուլօզ են ունեցած եղել (ներքին գործարանների հիպերտրօֆիա, փորի վրա տուբերկուլօզային շանկր և այլն). Նրանց աճուկների բորբոքված խուլերից հանած թարախի մէջ տուբերկուլօզի բացիլներ են գտնվել։ Առողջանալուց մօտ մի տարի յետոյ, այսինքն 1913 թւի յունվար ամսին, նրանց վրա կատարված դիտողութիւնը հաստատել է հաւաստիօրէն, որ նրանց ներքին գործարանները, յատկապէս փայծաղն ու լեարդը, որոնք խիստ ծանր կերպով բռնված են եղել տուբերկուլօզով, ինչպէս ցոյց էր տալիս այդ գործարանների կնճռոտած ու բազմապիսաւոր կերպարանքը, այլևս տուբերկուլօզի ոչ մի հետք չեն ունեցել ոչ պարզ աչքի և ոչ մանրադիտական քննութեամբ. բացի այդ, նոյն այդ առողջացած հնդկախոզերի փայծաղից, լեարդից, թոքերից և աճուկների խուլերից առանձին-առանձին ճզմելով ու քամելով ստացված հեղուկները (émulsions) Հ. Սպալինգերը սրսկել է նոր և առողջ հնդկախոզերի (իւրաքանչիւր գործարանից ստացված հեղուկը 4 նոր հնդկախոզի կաշւի տակ), սակայն այդ կենդանիներից և ոչ մէկը տուբերկուլօզ չէ ստացել։

Առաջին 5 հնդկախոզերի նման փորձի ենթարկված 17 հնդկախոզերի մի երկրորդ խումբ ստուգվել են Ժընևի համալսարանի բժշկական ֆակուլտէտի քննութիւնների կօմիսիայի նախագահ՝ դոկտոր Լարդիի միջոցով. դոկտոր Լարդին այդ 17 հնդկախոզերից 15-ին հիմնովին բուժված է գտել։

Կենդանիների վրա կատարած վերոյիշեալ խրախուսական ու վստահելի փորձերից յետոյ Հ. Սպալինգերը անցել է մարդկանց։ Փորձի ենթարկված 54 թոքախտաւոր հիւանդներից 17-ը մինչև այսօր զգալի բարելաւումն են ստացել, նրանց թոքերի մէջ գտնված խոռոչները, ինչպէս ցոյց է տալիս ունկնդրումը (auscultation), զօրացել են, խուխի և թոքի մէջ գտնված բացիլները չքացել են և նրանց մարմնի տաքութեան աստիճանը իջել է նօրմալի։ Մնացած 37 հոգին դեռ շարունակում են բուժվել Հ. Սպալինգերի մեթօդով։

Թէ ինչ արդիւնք կունենայ Հ. Սպալինգերի գտած այս նոր միջոցը և որքան կաջողի նա մի արմատական դարման հանդիսանալու տուբերկուլօզի դէմ և փրկելու մարդկութիւնը այդ բազմաչարչար յամառ հիւանդութեան ճիրաններից, այդ դեռ ապագայի հարց է։ Մինչև այսօր դեռ ոչ մի կօմպետենտ պատօլօգ, բժիշկ կամ բակտերիօլօգ չէ արտայայտվել այս նոր միջոցի մասին և չէր էլ կարող արտայայտվել այսքան կարճ ժամանակամիջոցում, որովհետև հէնց իր իսկ Հ. Սպալինգերի՝ մարդկանց վրա արած փորձերը դեռ լրացած չեն։ Իսկ որպէսզի հնարաւոր լինի ստուգել նոր միջոցի դրական ազդեցութիւնը հիմնաւորապէս ու բարեխղճօրէն, անհրաժեշտ է կատարել բազմաթիւ փորձեր, անհրաժեշտ է համբերութիւն և ժամանակ՝ վերջնականապէս համոզվելու, որ նոր միջոցը բժշկում է տուբերկուլօզը և բժշկում ո՛չ թէ ժամանակաւորապէս, մի քանի ամիսներից կամ տարիներից յետոյ նորից երևան գալու, ինչպէս այդ պատահել է վերջին տարիների ընթացքում տուբերկուլօզի դէմ առաջարկված բազմաթիւ նոր միջոցների նկատմամբ, այլ արմատապէս ու վերջնականապէս, առանց նորից երևան գալու վախի, մի կողմ թողնելով, ի հարկէ, նոր վարակումները։

Սակայն, որքան էլ որ այս նոր միջոցի ապագայ աջողութիւնը դեռ անորոշ ու պրօբլեմատիկ լինի, այնուամենայնիւ նա ունի մի շատ խոշոր առաւելութիւն, որ պէտք է ընդգծել հէնց այժմեանից որպէս արժէքաւոր գրաւական նրա ապագայ աջողութեան։ Այդ խոշոր առաւելութիւնը հետևեալն է. Հ. Սպալինգերի գտած նոր միջոցը իր էութեամբ մօտենում, նոյնիսկ նմանում է այն բնական միջոցներին, որ գործադրում է ինքը կենդանի օրգանիզմը՝ կռւելու որևէ միկրոբային վարակման դէմ։ Այսպէս՝ այն անտիժէնը, որ Հ. Սպալինգերը պատրաստել է տուբերկուլօզի բացիլներից, նոյնութեամբ գոյութիւն ունի տուբերկուլօզով բռնված իւրաքանչիւր հիւանդի մարմնակազմի մէջ և արդիւնք է տուբերկուլօզի բացիլների և սրանց արտաթորած զանազան վնասակար և թունաւոր հեղուկների ներկայութեան, որոնց վնասակար և քայքայիչ ազդեցութիւնը չէզոքացնելու համար օրգանիզմը առաջ է բերում արեան մէջ համապատասխան անտիկօրեր։

Տարբերութիւնը կայանում է միայն նրանում, որ, մինչդեռ բուժման չենթարկված հիւանդի մէջ կենդանի բացիլներն անընդհատ աճելով ու բազմանալով և գերազանցելով գոյացած անտիկօրերի հակաազդեցութեանը, անվերջ շարունակում են աւերել ու քայքայել մարմնակազմը, Հ. Սպալինգերի անտիժէնով և նրա ազդեցութեանը նպաստող միւս օժանդակ նիւթերով սրսկված հիւանդի մարմնակազմը, ստանալով զուտ անկենդան անտիժէնը (տուբերկուլօզի բացիլների նիւթն ու հիւթը) առանց կենդանի բացիլ անտիժէնի, բազմապատկում է իր անտիկօրերի քանակը և զօրեղացնում անտիկօրերի բացիլների չէզոքացնող ու սպանող ազդեցութիւնը։ Հիւանդի օրգանիզմը, քայքայվելու փոխարէն, օր ըստ օրէ աւելի կազդուրվում, նոր ոյժեր է ստանում և գերազանցօրէն ընդունակ է դառնում աջող կռիւ մղել իր մէջ գտնված բացիլների դէմ։

Թէև, ճշմարիտ է, նոր միջոցով բուժելու մեթօդը բարդ է և նրա գործադրութեան եղանակը խրթին, սակայն դժուար չէ յուսալ, որ զարգացման բարձր աստիճանի հասած ներկայ տեխնիկան կարող կը լինի կարճ միջոցում պարզել բարդութիւնները և հարթել բոլոր դժուարութիւնները։

Իսկ առայժմ դեռ պէտք է սպասել և յուսալ, որ Հ. Սպալինգերի գտած նոր միջոցը մի արմատական դարման հանդիսանայ մարդկութեան ցեց տուբերկուլօզի դէմ և լի ու լի արդարացնէ գիտութեան յոյսերն ու սպասելիքները։

Ժընէվ Ա. Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ցխինվալ, 30 մայիսի

Կ. Հ. Բ. Ընկ. Ցխինվալի ճիւղի վարչութիւնը ստացել է յօգուտ գրադարանի հետևեալ նուիրատւութիւնները.

Բագուի մի խումբ նուիրատուներից՝ մի օրինակ «Մշակ», Միք. Յ. Միրուրնութեանից 100 ր. արժողութեան զանազան հայերէն գրքեր, Աբգար Յ. Պալեանից 200-ի չափ զանազան մանկական գրքեր։ Վարչութիւնս յայտնում է խորին շնորհակալութիւն նուիրատուներին։

Այս առիթով կը խնդրենք կրթասէր անձանց, որոնց սրտին մօտ է վէրախօս մանուկների կրթութեան գործը, չը խնայել վերոյիշեալ գրադարանի համար և ցոյց տալ իրանց աջակցութիւնը։ Գրքեր կարող են ուղարկել հետևեալ հասցէով՝ Библіотека Арм. Благотв. О-ва, Цхинвали.

Խնդրում ենք միւս հայ թերթերի խմբագիրներին արտատպել։

Ի դիմաց վարչութեան՝
Աւ. ուսուցիչ և քարտուղար
Մարգար Սահաթեան

—

Քեֆքի, 31 մայիսի

Խորին շնորհակալութիւն ենք յայտնում տեղիս վաճառական Սեդրակ Ջալալեանին, որ իր վաղամեռիկ որդու՝ Վաղգէնի յիշատակին նուիրաբերեց 25 ր. յօգուտ ծխ. դպրոցի, և 25 ր. ապագայում կառուցվելիք աղօթատան։

Հոգաբարձութիւն և երէցփոխ

—

Օնի (Քութ. Նահ.), 6 յունիսի

Օնիի եկ.-ծխ. դպրոցն այս տարի որպէս նուէր ստանում է «Մշակ» թերթը՝ Բագուի մի խումբ նուիրատուներից, և «Հովիտ» շաբաթաթերթը՝ հայր. խմբագրից, որոնց յայտնում եմ խորին շնորհակալութիւն։

Հոգաբարձու՝ Արգ. ք. Բերուչեան

—

Ախալցխա 6 յունիսի

Ախալցխայի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Ս. Կամբարեանին՝ օր. Ն. Աւագեանի առաջարկութեամբ նուիրաբերված 100 րուբլու առիթով յօգուտ Ախալցխայի մանկական ամարային ակումբի։

Նախագահ վարչութեան՝
Ն. Ջաթալբաշեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՔ

—o—

Փոխադարձ յարաբերութիւններ

Ա.

Հայկական բարենորոգմանց հարցը այժմէական դարձուցած է ազգին երկու գլխաւոր մասերուն յարաբերութեանց խնդիրը, որ արդարև կենսական կարևորութիւն մը ունի։

Առանց անդրադառնալու անցեալ պարագաներու վրայ, առանց քննելու նոյն իսկ յարաբերութեանց վիճակը անցեալին մէջ և առանց պրպտելու անոնց շարժառիթները, կարժէ որ ապագային վրայ մտածուի։

Ազգի մը ամբողջութիւնը կրնայ պահպանուիլ այնքան աւելի զօրաւոր ու ուժգին կերպով, որքան անոր մէջ գոյութիւն ունենայ նկարագրի, բարքերու, սովորութեանց և դաստիարակութեան ու կրթութեան միակերպութիւն։

Դիմադրական ոգին, ազգային ինքնագոյութեան պահպանութեան ոյժը այնքան զօրաւոր կըլլայ ազգի մը մէջ, որքան մըտածելու և զգալու եղանակին մէջ մերձաւորութիւն կամ ընդհանուր և մեծ գործերու մէջ համաձայնութիւն գոյութիւն ունենայ անոր ամեն մէկ անհատին մէջ։

Հայութիւնը այս տեսակէտով չարաչար կերպով խաթարուած մարմին մըն է, վասնզի մեր ցրուած վիճակը և զանազան ու բազմաթիւ ու իրարու անհամապատասխան վարչութիւններու տակ ապրելու հարկադրուած ըլլալը՝ զմեզ մէկզմէկու օտարացուցած է բոլորովին և ամեն մէկ միջավայրի մէջ, զանազան խառնուածքով, բարքով և սովորութիւնով հայերու խումբեր առաջ բերած է, որոնց մէջ ընդհանուր ներդաշնակութիւն մը ստեղծել գրեթէ անկարելի է։

Մասնաւորապէս հայոց մէջ երկու գլխաւոր հատուած կայ, որոնք կրնան հայութեան երկու մայր - երակները նկատուիլ։ Անոնք են Ռուսիոյ և Թիւրքիոյ հայերը։

Միւսները չունին այն նշանակութիւնը, որ այդ երկուքն ունին։

Առանց այդ բուներուն արդէն միւսները իրենց գոյութեան իրաւունքը կը կորսնցնեն և կը փչանան։

Դժբաղդաբար այդ մայր երակները իրարու անհաղորդ են և իրարմէ բոլորովին խորթանալու ուղղութեան մը մէջ ինկած են, առանց սակայն իրենց կամքին, այլ արտաքին ազդեցութիւններու տակ, որոնց մանրամասնութիւններու մէջ մտնել մեզի շատ հեռու կը տանի։

Հիմա գոյութիւն առած վիճակը, և զայն կարգաւորելու խնդիրն է, որ այժմէութիւն ունի և, փափագելի է, որ անոր վրայ միայն անդրադառնանք։

Ռուսիոյ և Թիւրքիոյ հայերը այսօր գրեթէ իրարու բոլորովին օտար երկու տարբեր ժողովուրդներ են, որոնք ժառանգականօրէն իրենց փոխանցուած միայն մի քանի աւանդութիւններու, դաւանանքի, ու ազգային կազմակերպութիւններու միութեամբ մը իրարու կապուած են։

Այսօրուան ըմբռնումները, արդի սովորութիւնները, կրթութիւնը և դաստիարակութիւնը՝ իրարու բոլոր օտար դարձուցած է այս երկու ժողովուրդները։

Մեզի միացնող կապերն են՝ նախ կրօնական միութիւնը, որ մեր նախնիքներէն ժառանգած ենք երկուքս ալ և եթէ այսօր կը պահպանենք, արդիական արժէք մը չունի, այլ անցեալին անդրադարձումն է։

Կենսական կապը, որ ազգի մը զանազան մասերը իրարու սերտիւ կրնայ կապել, լեզուն է, որ երկու հատուածներու մէջ ալ յատուկ դրոշմ մը ստացած և երկու որոշ ուղղութիւնով զարգացած է։ Այնպէս որ՝ այսօր ոչ թէ միայն խօսուած, այլ նաև գրուած լեզուները՝ այս երկու մայր-հատուածներուն մէջ, նոյնիսկ բառամթերքի և քերականական կազմով իրարու անհամապատասխան և ինքնայատուկ ուղղութիւն մը ունին։

Մեզի խորթ կը հնչէ ռուսահայ բարբառը, ապահովաբար խորթ հնչելով անոնց ալ արևմտեան աշխարհաբարը։ Հետևաբար այդ գլխաւոր կապն ալ վտանգուած է և այսօր միութեան մը ատաղձ ըլլալէ շատ հեռու է։

Լեզուն միութեան կապ հռչակելու համար պէտք է դէպի ետ դառնալ, դէպի անցեալ ժամանակները բարձրանալ, հոն գտնելու համար միակ հասարակաց լեզուն, անցեալ մատենագրական լեզուն, գրաբարը, որմէ սերած են երկու տարբեր ուղղութեամբ այսօրուան երկու հատուածներուն խօսած և գրած լեզուները։ Հետևաբար՝ լեզուն անցեալն է, և ոչ թէ ներկան է, որ մեզի իրարու կը կապէ։

Իսկ մեր ընտանեկան բարքերը կը պարունակեն շատ բան իրենց մէջ փոխ առնուած Թիւրքականէն ու Փրանսականէն և ռուսահայոցը՝ պարսկականէն ու ռուսականէն։

Եթէ ինչ-ինչ կէտերու մէջ, ինչպէս լաչակի գործածութիւնը, էրիկ մարդոց՝ տան մէջ արտակարգ գերիշխանութիւնը՝ Թիւրքահայ և ռուսահայ շինական դասակարգին մէջ հասարակաց է, անիկա կը պարտինք պարսիկ ու Թիւրք բարքերուն՝ իբր խալամի՝ նոյնութեան։

Իսկ նոր սերունդը, և քաղքենի (բուրժուա) դասակարգը ռուսական և Փրանսական բարքերու կապկային ընդօրինակութեան հետապնդելով՝ այդ կապն ալ բոլորովին կը խաթարէ և կը քանդէ։

Եւ որովհետև շատ դոյզն են մեր յարաբերութիւնները, կամ շատ աննշան, բնական է թէ օրէ օր աւելի օտարանալու վտանգին տակ կը գտնուինք, և ապահովաբար եթէ լուրջ աշխատութիւն չըլլայ ազգային միութիւն մը ստեղծելու, յարաբերութիւններ առաջ բերելու, օր մը բոլորովին պիտի օտարանանք, և անհասկացողութիւնը աւելի պիտի մեծնայ։

Միայն գիտնալ՝ թէ հայ ենք և սերած միևնոյն ցեղէն՝ շատ անբաւական կապ մըն է երկու իրարու օտար զանգուածները իրարու հետ միացնելու, ազգային զօրաւոր միութիւն մը առաջ բերելու համար։

Թիւրքահայ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

—

Կարմիր Վանքի բռնագրաւուած հողերու խնդիրը

Էրզրում, 28 մայիս

Երկար ձգձգումներէ յետոյ, վերջապէս կառավարութիւնը անցեալ շաբթու Կարմիր վանքի՝ Թաֆթացիներու (Թիւրք) կողմէ բռնագրաւուած հողերու համար իբրև քննիչներ ուղարկեց զրաաթ-միւդիրի՝ Հիլմի և արազի-միւդիրի՝ Հակկը բէյերը։

Երկու քննիչները ժամանելով բռնագրաւման վայրը անմիջապէս քննութիւններու ձեռնարկեցին, որ տևեց ամբողջ 2 օր։

Թաֆթացիները ոչ մէկ միջոցի առաջ կանգ էին առած, հաստատելու համար որ բռնագրաւում տեղի չէ ունեցած, որ հողերու իսկական տէրը իրենք են և որ վանքը իր գոյութեան ամբողջ ընթացքին մէջ օր մը չէ օգտուած խնդրոյ առարկայ եղած այդ կալուածէն։ Սուտերու անսպառ տոպրակները բանալով անոնք կը կարծէին, թէ պիտի կարենան ճշմարտութիւնը նենգափոխել և հողերու պատմական տէր հռչակուելով դատը շահիլ։ Բայց եկուր տես, որ անոնց բոլոր սուտերուն դիմաց՝ կը խօսէին օրինական փաստաթուղթերն և իրենց դրացի գիւղերու իսլամ հայրենակիցներու կողմէ միանգամայն անաչառ վկայութիւնները։ Այսպէսով՝ կալուածներու Կարմիր վանքին սեփականութիւն ըլլալը հաստատուեցաւ։ Քօչքեցի հայ-մահմեդական գիւղացիներուն՝ արդարութիւնը երևան բերելու խնդրոյն մէջ ըրած ծառայութիւնները միանգամայն անուրանալի է։

Քօչքեցիք, որ Անիէն գաղթած են և հոս բռնութիւններու տեղի տալով մահմեդականացած, հիմա դեռ չեն կորսնցուցած իրենց ազգային սովորութիւնները, նիստ ու կացը, աւանդութիւնները և այլն և դեռ կը շարունակեն աշխատանքէ ազատ ժամերը հաւաքուիլ խարմաններու կամ գիւղական օդաներու մէջ իրենց գաղթի՝ պապերէն մնացած պատմութիւնները ընել և կանիծեն այն հայնակին (այսպէս կը կոչեն իրենց ծերերը), որ արենակցական կապ (ամուսնական) կը ստեղծէ օտարի (իմա՝ Թիւրքի) հետ։ Անոնց հացը բերաքեթլի չըլլար, եթէ խմորին վրայ խաչ չքաշեն (թէև իսլամ են)։ Այժմ շատերը անոնցմէ նոյնիսկ բացարձակ իրենց հայ-մահմեդական կանուանեն, որ արդէն նշանակալից երևոյթ կը հանդիսանայ մեզ՝ Թիւրքիոյ մէջ ապրող և անոնց հոգեբանութիւնը շատ լաւ ուսումնասիրած ժողովուրդներուս համար։

Քօչքեցիներէն զատ Թաֆթացի խեղճ, աղքատ աշխատաւոր գիւղացիներէն անգամ եկած են այնպիսիներ, որ բոլորի ներկայութեան յայտնած են, թէ կերթան, ճշմարտութիւնը կըսեն, եթէ միայն երդման տակ ըլլայ, վասնզի երդման տակ սուտ չեն կրնար, իսկ առանց երդումի պիտի ստեն, այնպէս հալածական պիտի դառնան նոյն այն բէյերու կողմէ, որոնք իրենց թաթը դրեր են վանքին հողերուն վրայ և իրենց հարստութեամբ, դիրքով ու ազդեցութեամբ գերի դարձուցեր գիւղին թշուառները... «Մեր հացը անոնցմէ կը առնանք. ինչպէս առանց երդումի ճշմարտութիւնը յայտնենք՝ վանքին կողմը բռնենք... չէ որ մեզ հոսկէ սիւրգիւն կընեն»... ըսած են անոնք։ Իսկ հնեացի, աղղադցի և այլ վկաները ջրած են Թաֆթացիներու վկայութիւնները և հաստատած, որ կալուածքը միայն և միայն վանքի սեփականութիւնն է։

Բացի այդ բերանացի տրուած վկայութիւններէն՝ պակաս չեն և գրաւոր բազում փաստաթղթեր, որոնք ոչ մէկ կասկած կը թողուն կալուածքը վանքին սեփականութիւնը ըլլալուն։

Սուտերը մէջտեղ ելնելէն, Թաֆթացիներու բոլոր հնարովի առարկութիւնները փաստացի ջրելէն, կալուածքը վանքինն ըլլալը աղաղակող փաստերով ապացուցանելէն ետք՝ կը մնար միայն զանիկա պաշտպանել Թաֆթացի բէյերու կամայականութենէն, բայց անոնք խրատուող պտուղներ չեն. կառավարութեան հրամանն անգամ չի կրնար զանոնք սաստել, վասնզի համոզուած են, որ կառավարութիւնը իր ոյժին և դերին մէջ չէ, վաղն ալ իրենք կրնան հակահրաման մը դուրս բերել նոյն այդ կառավարութեան սարայէն և այդ նոյն հակահրամանով նորէն տիրապետել հողերուն։

Այդ է պատճառը, որ քանի մը օր յետոյ, երբ կառավարութեան ուղարկած ժանդարմական չավուշի և երկու պալդ ժանդարմներու օգնութեամբ կոռոզէին արտերը վանքին կողմէ, բէյերը, ստիպելով գիւղին բոլոր բնակիչները, անասուններով լեցուցին վանքին արտերը և արածեցուցին, և չավուշն ու կառավարութիւնը բաւականացան միայն այն բանով, որ քանի մը ժամով անասունները հեռացուցին արտերէն... Այսօր նորէն կարածեցնեն նոյն վայրերը, և ոչ ոք կայ, որ կառավարութեան հրամանն ի գործ դնէ...

Հետաքրքրական է իմանալ, թէ եթէ նոյն Թաֆթացիներու դրութեան մէջ ըլլար մի հայ գիւղ, իսկ վանքի տեղ՝ մի ջամի և կամ իսլամ սեփականատէր, ինչպէս կը վարուէր այն ատեն Թիւրք կառավարութիւնը և անոր գործադիր իշխանութիւնը...

Իրազեկ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Ուստր, 4 յունիս (ն. տ.)

Մայիս ամսուան ընթացքին ամերիկահայ գաղթականութեան համար ուշագրաւ խոշոր դէպքեր տեղի չունեցան թէև, բայց եղան խնդիրներ, որոնք հանրային կեանքը լճացած չպահեցին և դարձան մասամբ հետաքրքրական։

Այսպիսի խնդիրներէն մէկը Կարապետ Մարդուկէեանի (իմա կարգալոյծ Ղևոնդ վարդ.) գործն էր, որի մասին ես արդէն գրած եմ այս էջերուն մէջ իր ատենին։

Կարապետ Մարդուկէեան արհամարհելով եկեղեցական բարձր իշխանութեան կողմէ եղած տնօրինութիւնը իր մասին՝ յաջողած էր Ֆռեզնոյի (Կալիֆորնիա) հայ ժողովրդին մէկ մասը իր կողմը գրաւել իբրև հայ եկեղեցւոյ պաշտօնեայ։ Տեղւոյն հոգաբարձութիւնը, չկարենալով դիմադրել Մարդուկէեանի ոտնձգութիւններուն, ճարահատ դիմած էր ամերիկեան դատարանը, արգիլելու զինքը եկեղեցական գործերուն ձեռնամուխ լինելէ, և յաջողած էր ժամանակաւոր կերպով արգելք ձեռք բերել յիշեալին դէմ, մինչև դատավարութեան վախճանը։ Դատավարութեան օր նշանակուած էր մայիսի վերջերը։

Ֆրէզնօյի և Ֆառլըրի հոգաբարձութիւնները, նկատի առնելով որ Մարգուկէսեանի գործը սուր կերպարանք առած է և ստացած է լուրջ բնաւորութիւն, հեռագրով խնդրեցին ամերիկահայոց առաջնորդ Արսէն ծ. վարդ. Վեհունիէն փութալ Ֆառլըր և ստանձնել դատին պաշտպանութիւնը, իբրև ճանչցուած պետ ամերիկահայ եկեղեցական գործերու։ Առաջնորդ հայրը խոկոյն մեկնեցաւ Կալիֆօրնիա, գործը կերպով մը կարգադրելու համար։ Մեր ստացած տեղեկութիւններէն կը հասկցուի, որ առաջնորդը փորձած է ամեն հնարաւոր միջոցներով գործը առանց դատարանի վերջացնելու, բայց թափած բոլոր ջանքերն ու աշխատութիւնները անցած են ապարդիւն։ Մարգուկէսեանի համակիրները մնացած են անդրդուելի իրենց պահանջին վրայ, այնպէս որ անկարելի եղած է խնդիրը հաշտարար ատեանով մը փակել։

Դատավարութիւնը տեղի ունեցած է, սակայն կրկին յետաձգուած է կարգ մը բանաւոր պատճառներով։

Թէ ինչ պիտի ըլլայ երկրորդ դատավարութեան արդիւնքը, յայտնի չէ, բայց որոշ է թէ՝ Ֆառլըրի թեմը ահագին նիւթական ծախսերու պիտի ենթարկուի, եկեղեցին բարոյապէս պիտի տուժէ և հայ ժողովուրդը՝ յաջս օտարներու՝ ծաղրի առարկայ պիտի դառնայ։ Ահա թէ ինչպէս կըմբռնեն կարգ մը մարդիկ իրենց դերն ու պարտականութիւնը ազգին ու եկեղեցին հանդէպ... Մաղաք Գ. Պէրպէրեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕՄՐՈՒԼԸ ԸՆԴՈՒՆՎԱԾ

Երկարամեայ կռիւը վերջացաւ յաղթանակով. 34 տարի շարունակվող քաղաքական պայքարը յանուն Իրլանդիայի ինքնավարութեան վերջապէս տարաւ իր յաղթանակը։

Ինչպէս յայտնի է, հօմրուլի բիլլը վերջնականապէս ընդունվեց համայնքների պալատում 77 ձայների առաւելութեամբ, և առաջ բերեց ցնծութիւն ու բուռն ոգևորութիւն. Թնդում է ոգևորված կեցցէն, ճօճում են թաշկինակներ, գլխարկներ։ Հարկաւոր եղան տասնեակ տարիներ հասարակական կարծիքը պատրաստելու համար, ընտելի դարձնելու իրլանդացիների արդար պահանջը։ 1880 թուին, համայնքների պալատում հօմրուլի կողմնակից էին 5—6 արմատականներ միայն, իսկ այժմ հօմրուլի բիլլը ընդունվում է ամբողջ լիբերալ կուսակցութեան կողմից։ Առաջադիմականներից միայն երկու հոգի են ձայն տալիս բիլլի դէմ, և ութ էլ անկախ իրլանդացիներ ձեռնպահ մնում, որպէս բողոք Ուլստէրի ժամանակաւոր անջատման դէմ։ Օպպօզիցիան, այսինքն պահպանողականները, ունիօնիստները, համոզված որ համայնքների պալատում պարտութիւնը անխուսափելի է, համաձայնվում են քուէարկութեան դիմել գրեթէ առանց վիճաբանութիւնների։

— Վիճաբանութիւնների տեղիք չը կայ այլևս,—ասում է օպպօզիցիայի պարագլուխ Բօնար Լօու.— կառավարութեան յաղթութիւնը ներքին պալատում ապահովված է, իսկ վերին պալատը անզօր է այլևս. (պարլամենտական ակտի համաձայն բիլլը առանց լօրդերի համաձայնութեան էլ օրէնք կը դառնայ)։ Թող համոզված լինեն բոլորը, որ «այստեղ վերջանում է փարսի առաջին գործողութիւնը միայն և որ պարլամենտական պարիսպներից դուրս կը լինի նրա շարունակութիւնը, ուր փարսը կը փոխվի ողբերգութեան»։

Օպպօզիցեայի պարագլուխը ակնարկում էր Ուլստէրի մասին, հնարաւոր բարդութիւնների մասին Ուլստէրում։

Իրլանդիայի ինքնավարութեան հարցի վերջին էտապում պահպանողականները ամեն ջանք գործ են դնում, գոնէ կողմնակի միջոցներով, խանգարել նրա իրագործմանը։

Այդ նպատակով աշխատում են գրգռել Իրլանդիայի մի մասի՝ Ուլստէրի և բնիկ իրլանդացիների միջև գոյութիւն ունեցող թշնամութիւնը, զարթեցնում նրանց պատմական յիշողութիւնները։

Ուլստէրցիների և բնիկ իրլանդացիների թշնամութիւնն ունի իր դարաւոր պատմութիւնը։ Անկլիկան եկեղեցու և կաթօլիկութեան միջև տեղի ունեցող կռիւների ժամանակ, Անգլիայի թագաւորները խլում էին կաթօլիկ իրլանդացիների հողերը Ուլստէրում, գաղթեցնում կաթօլիկներին զանազան տեղեր և նրանց հողերը Ուլստէրում բաժանում բողոքականներին։ Այդ ժամանակներից սկսվում է կաթօլիկ իրլանդացիների և բողոքական ուլստէրցիների փոխադարձ ատելութիւնը։

1641 թ. կաթօլիկները յարձակվում են բողոքական ուլստէրցիների վրա. տեղի է ունենում սարսափելի կոտորած։ Կրոմվէլը ճնշում է կաթօլիկների այդ ապստամբութիւնը, բողոքականների արքան վրէժ է առնում ու նուաճում ամբողջ Իրլանդիան։

Այնուհետև, կաթօլիկ Յակոբ II-ի թագաւորութեան ժամանակ, պարլամենտի և թագաւորի միջև ծագած խռովութիւնները վերջանում են Յակոբի գահընկէցութեամբ. վերջինը փախչում է Իրլանդիա և Դուբլինում պարլամենտ գումարում, իսկ բրիտանական գահն է բարձրանում պրինց Վիլհէլմ Օրանացին։ Ուլստէրի բողոքականները իրանց «օրանժիստներ» են յայտարարում, այսինքն Վիլհէլմ Օրանացու կողմնակից, որի հրամանատարութեամբ յարձակվում են կաթօլիկների վրա։ Իրլանդացի կաթօլիկներից խլվում են յօգուտ օրանժիստների մօտ կէս միլիօն դեսեատին հողեր. կաթօլիկներին արգելվում է պետական պաշտօններ վարել։

Ահա այն պատմական պատճառները, որոնք հիմք են ծառայում մինչև այժմ էլ մի երկրի ազգաբնակութեան՝ բնիկ իրլանդացիների, կաթօլիկ տարրի և ուլստէրցի բողոքականների միջև խռովութիւններին։ Ուլստէրցիները, կամ աւելի շուտ «օրանժիստները», չեն ուզում հպատակվել Դուբլինի պարլամենտին, գերադասելով մնալ ընդհանուր պետական՝ Լօնդօնի պարլամենտի շրջանում։ Այդպէս են տրամադրում ուլստէրցիներին պահպանողականները։

Իսկ առաջադիմականները և իրլանդացի նացիօնալիստները ոչ մի հիմք չեն գտնում Ուլստէրի անջատման համար, քանի որ հօմրուլը հաւասար կերպով պահպանում է և բողոքական փոքրամասնութեան շահերը. և ոչ մի խօսք դաւանական կամ հողային հալածանքների մասին լինել չէ կարող։ Ուլստէրի անջատման հարցը բարձրացնող, հօմրուլի հակառակորդ պահպանողականներն են, որոնք ամեն ջանք գործ են դնում Ասկվիթի լիբերալ կաբինէտը տապալելու և նրա ծրագրած լիբերալ ռեֆորմների առաջն առնելու համար։ Ս. Դ.-Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Թաւրիզ, 28 մայիսի

Նոր խռովութիւններ, յեղափոխական խլրտումներ և կասկածելի անակնկալներ՝ նոր երկիւղ և սարսափ են ազդում ազգաբնակութեան։

4—5 շաբաթ առաջ Սալմաստի կառավարանիստ Դիլմանում տեղացի թուրքեր զէնք են բաց անում և վիրաւորում մի ռուս զինուորի։ Դրանից գրգռված ռուս և պարսիկ իշխանութիւնները սկսում են խիստ խուզարկութիւն և առնում ազգաբնակութեան ձեռքին գտնված մանր ու խոշոր զէնքերը։ Ասողներ եղան, որ ռուսները ռմբակոծել են Դիլմանը և Հին-Բազարը, սակայն դա չը ստուգվեց դեռ ևս։

Խուզարկութիւնից ազատ չը մնացին նաև հայաբնակ Հաֆթվանն ու Հին-Բազարը։ Հաֆթվանը խուզարկվեց նոյնիսկ Համբարձման օրը, երբ տղամարդկանց մեծամասնութիւնը բացակայ էր գիւղից ուխտագնացութեան պատճառով։

Խուզարկութեան ժամանակ բաւականին իրեր ու զարդեղէններ պակասել են տներից. ոմանց ասելով, տնապահ ծառաները, օգուտ քաղելով հանգամանքից, յափշտակել են տէրերի սեփականութիւնները։ Բարեբախտաբար հայերի տներից չեն գտել ոչ զէնք և ոչ այլ վնասակար բաներ, բացի մի-երկու հատ հին ու մին սիստեմի զէնքերից ու ատրճանակից։

Խուզարկեցին նաև Հին-Բազարի հայ, թուրք և հրեայ բնակիչների տները՝ կոտրելով ի հարկէ դռները, առանց սակայն վնասակար նիւթեր գտնելու։

Խօյից եկող սարդարը, որին քարգուզարն է ուղարկել, յայտարարեց Դիլմանում, որ պատերազմական դրութիւն է, արգելվում են խմբակցութիւններ, ժողովներ և միանգամայն խիստ պատիժների կենթարկվեն երկրի կարգը խանգարողները։

Խուզարկութիւններ և յայտարարութիւններ տեղի են ունեցել նաև Ուրմիի շրջանում։ Թաւրիզում նահանգապետ Շուջա-ուդ-Դօվլէի կողմից ևս յայտարարութիւններ երևացին Թաւրիզի պատերի վրա, որոնք զգուշացնում են ազգաբնակութեանն առհասարակ զգոյշ լինել, ժողովներից և յեղափոխական գումարումներից խուսափել, հակառակ դէպքում չարաչար պատժի կենթարկվեն նրանք։

Տակաւին մէջլիսի ընտրութիւնները չը սկսած, ծայր են տալիս կարծէք մութ ույժերի շարժումները և երկրի ապահովութիւնն ու անդորրութիւնը վրդովվում ի վնաս ժողովրդեան։

Պարսից խռովայոյզ նացիօնալիստները երկրում թէ արտասահմանում, օրինակ Լօնդօնում, քայլեր են անում, որ ռուսաց զինուորական ույժերը օր առաջ դուրս գան երկրից, առանց մի րոպէ մտածելու թէ ինչ կը լինի մանաւորապէս Ատրպատականի վիճակը, որտեղ, դեռ ևս ռուսաց ներկայութեամբ անգամ, խաղաղութիւնն ու վստահութիւնը երաշխաւորված չեն, ուր մնաց որ ռուսները գնալուց յետոյ։

Արդէն նորահաստատ քաղաքային վարչութեան ձեռքումն է գտնվում անուղղակի հարկերի մատակարարութիւնը. Նահանգական իշխանութիւնը ջանում է հացահատիկի գործն էլ առնել բելգիացիների ձեռքից։ Թէ ինչ կը լինի այս կռւի վախճանը, ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Հայկազուն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Աւստրիան և Իտալիան մտադիր են գրաւել Ալբանիայի մի մասը։

◆ Բուլղարական սահմանում կենտրօնանում են սերբիական զօրքեր։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ ցուցակագրված են այն յոյները, որոնց պատերազմի դէպքում արտաքսելու են Թիւրքիայից։ Բրուսայի վիլայէթում ընդհարման ժամանակ բռնանվել են 9 յոյն և 17 թիւրք։

◆ Պետերբուրգից վերադառնալիս Պուանկարէն այցելելու է Ստօկհօլմ, որպէսզի հաւատացնէ, թէ Ռուսաստանը ագրեսիվ նկատումներ չունի Շվէցիայի վերաբերութեամբ։

◆ Չինաստանի հարաւից դէպի հիւսիս ուղարկվեցին 3400 գագաղ չինացի մեռելներով, որոնք երբ թէ կտակել էին թաղել իրանց՝ հայրենիքում։ Պարզվել է, սակայն, որ դագաղների մէջ եղել է զէնք։

◆ Լուրերի համաձայն, Ալբանիայի իշխանի կեանքը վտանգից դուրս է. ապստամբները պարտված են, որովհետև վերջիններին սպառնացել են, թէ պրինց Վիդին սպանելու դէպքում միջազգային ռազմի նաւատորմը կը ռմբակոծէ ապստամբներին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԿԱՏԵՑԷՔ,

թէ որքան կարևոր է Օդօլի միանգամայն իւրատեսակ ներգործութիւնը. այն ժամանակ, երբ ատամները և բերանի խոռոչը մաքուր պահելու համար բոլոր եղած միջոցները իրանց ներգործութիւնն անում են միայն մաքրելու վայրկեանին, Օդօլը շարունակում է իր անտիսէպտիկ ներգործութիւնը շարունակաբար՝ երկար ժամերի ընթացքում։ Օդօլը ներս է ծծվում փչացած ատամների և լնդերքի լորձաթաղանթի խորքը, որոշ աստիճան մնում է նրանց, և բերանի խոռոչի մէջ մնացած այդ անտիսէպտիկ պաշարով է պայմանաւորվում Օդօլի երկարատև ներգործութիւնը։ Օդօլի այդ նշանաւոր յատկութիւնը յուսալի կերպով պաշտպանում է բերանի ներսը փտածութեան պրոցեսս առաջանալուց, հետևաբար և ատամները պահում է առողջ դրութեան մէջ։

Մի սրուակի գինը 85 կ., մեծ սրուակը, որ կարող է բաւականանալ մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կ.։

(M. 141264/141281)

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ
ՄԱՆԳԼԻՍՈՒՄ

մի ինտելիգենտ ընտանիքում աշակերտաշակերտուհիներ լիակատար պանսիօնով։ Կարելի է նրանց հետ պարապել նաև գիմնազիաների և ռէալական դպրոցների բոլոր դասարանների դասընթացքի համապատասխան։ Դիմել՝ Բեհբութեան փողոց № 36, Ստեփանեանցին։ 581. 2—2

Լոյս տեսաւ
«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

պարզ և հասկանալի լեզուով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամեն տեսակ պատահական փորձանքները և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղարանով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև—«Վեներական ախտերի եւ ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ րեցեպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի տիկճոր», անէկդօտներ։ Գինը 20 կ.։ «Կնիկարմատի շալվարը», վօդէվիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆիի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Միևնոյն գաղտուղում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։

(հ. կ.) 327. 100—18

Թիֆլիսի գրավաճառանոցներում ծախվում է
ԱՏՐՊԵՏԻ
Հայ թագաւորների
ԵՒ
քաղաքների դրամները
(120 պատկերներով զարդարված)
Ամենահին ժամանակներից մինչև Տրդատ։
Գինն է 5 ռուբլի։
(հ.) 561. 3—2

ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՌՈՒՑՈՂ
ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ՄԻԱՄԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Հողային Բարեկարգութեան եւ Երկրագործութեան Գլխաւոր Վարչութեան թոյլտուութեամբ և հսկողութեամբ՝ ՊՐՕՖԵՍՍՕՐՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԸՆԿ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊՕԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻՆ կից բացվում են միամեայ դասընթացքներ կրակից ապահով գիւղական շինութիւնների համար տեխնիկներ պատրաստելու։ Դասընթացքներում ընդունվում են քաղ. դպր. 4-րդ դասար. ոչ-ցածր ցենզ ունեցողներին, համաձայն մայիսի 31-ի 1872 թ. կանօնադր., միջնակարգ դպր. 4-րդ դասարանցիներին, շինարար. դպրոցների և համապատասխան դպր. աշակերտներին, ըստ որում առաւելութիւն տրվում է շինարար. պրակտիկա ունեցողներին։ Դասընթացքներն աւարտողները Հողային Բարեկարգութեան եւ Երկրագործութեան Գլխաւոր Վարչութեան կողմից կառաջարկվեն հող. Բարեկարգ. Կոմիս., զեմստվ. հիմնարկ., գիւղատնտ. ընկ.-ին, կրեդիտ. ընկ.-ին և մասնաւոր անձանց։ Պարապմունքները սեպտ. 1-ից։ Պրօսպէկտներն ուղ. են 5 հատ 2 կ-նոց մարկա ստանալուց։

Նոյն տեղը տեղեկանալ ԿՐԱԿԻՑ ԱՊԱՀՈՎ ԳԻՒՂԱԿԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՍԵԱՏՆԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ։

СПБ., Разъѣзжая ул., 40.

(26) (П. 76954) 2—1

Բացված է 6 ամսեայ բաժանորդագրութիւն
(Յուլիս ամսվանից մինչև տարվայ վերջը)

ՄԱԽԼԱՍ

Գրական-երգիծաբանական պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

որը լոյս է տեսնում գունագոյն ծաղրանկարներով։ Յայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուով։

6 ամսվայ բաժնեգինն է՝ Թիֆլիսում—1 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս—1 ր. 75 կ.։ Արտասահման—10 ֆր.։

1914 թ. յունվարից լոյս տեսած համարների հետ միասին Թիֆլիսում՝ 3 ր. դուրսը՝ 3 ր. 50 կ.։

Առանձին համարը Թիֆլիսում 7 կ. Թիֆլիսից դուրս 8 կ.։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція журнала «МАХЛАСЪ», Петхаинская ул. № 20.
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal «MAKHLAS».
Խմբագիր-Հրատարակիչ՝ Տիկ. ՍԱԹԵՆԻԿ ԼԱՇՔԱՐԵԱՆ

(և. հ. կ.) 584. 6—1

ԿԱԶՄՎԱԾ Է ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Т-во Г. С. СКАНДАРОВЪ и Ко
ՖԻՐՄԱՅՈՎ.

Վաճառվելու են կարի մեքենաներ, գրամօֆօններ, պատեֆօններ, ժամացոյցներ և այլն։ Ընդունվում են նոր անդամներ։ Մանրամասն տեղեկութիւնների համար դիմել՝ Թիֆլիս, Պուշկինեան պասաժ, № 20, առաւօտեան ժ. 9-ից մինչև 2-ը ցերեկվայ, 5—8 երեկոյեան։

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ

(հ. կ.) 525. 6—5

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ., տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խակական ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին ½ ֆունտ կամ 200 գրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատօրային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «ԴԻՆԱՄՕ» ընկ. գործարանից ամեն տեսակի։

Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՑՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՑՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ. կ.) 551. 0—4

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւնները

1)	ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժնի, I և II հատորներ	1 ր.	50 կ.
2)	ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3)	ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ր.	20 կ.
4)	ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5)	ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6)	ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7)	ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ր.	
8)	ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9)	ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ստ. Մալխասեանցի		40 կ.
10)	ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11)	ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12)	ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի		15 կ.
13)	ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14)	ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15)	ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մաղ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16)	ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ր.	50 կ.
17)	ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18)	ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Ալ. Եզեկեանի.		15 կ.
19)	ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20)	ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի		20 կ.
21)	ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, бж. Արտ. Շխեանի .		25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան $30^0/_0$ զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն $25^0/_0$։ (6) 10—8

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный